

գտնելով այդ սքանչելի երգերը այսօր հրատարակել է մի ոգեւորուած յառաջաբանով, Պ. Չօպանեանը Փարիզում հրատարակուող «Անահիտ» ամսաթերթի խմբագիրն է, մի եռանդուն տաղանդաւոր երիտասարդ, որի գրականական գործունէութիւնը արժանի է ամենայն խրախուսանքի, Նա իբրեւ հրապարակախօս այսօր չունի հաւասարը տաճկահայերի մէջ, իսկ իբրեւ գրականագէտ և գեղարուեստական երկերի նրբամիտ գնահատող կարող է օրինակել լինել մեր ռուսահայ և տաճկահայ քննադատներից շատերի համար։ Քուչակի հրատարակութիւնը նրա գեղարուեստական ճաշակի նրբութիւնն ապացուցանող շատ փաստերից մէկն է։ Միթէ հարկաւոր է աւելացնել, թէ նա արժանի է բարոյական խրախուսանքի և նիւթական աջակցութեան։ Քուչակի երգերը հրատարակել է իւր սուղ միջոցներով և հրատարակել է շատ չքեղ։ Հասարակութիւնը պարտաւոր է գնել այդ երգերը ոչ միայն ազգասիրաբար, այլ և իւր սեպհական հաճոյքի համար։

Ե.

ՅՈՒՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿԱՅԱՆԻՆԻՆԻ: Հօրոտ-Մօրոտ. պատկերներ իրական կեանքից: Գիրք II Թիֆլիս 1903 թինն է 30 կ.

Յովհաննէս Մարկայանը օգտակար կոչուող գրական գործիչներիցն է։ Նա այն գրողներիցն է, որոնք չեն ուզում և չեն կարող շարագրել, այլ միմիայն արձանագրում են այն, ինչ որ տեսնում են։ Շատ անգամ նրանք իրանց տեսածը համեմում են սեփական դատողութիւններով, քայքայում են այն դէպքերը, որոնք նրանց աշխատութեան լաւագոյն մասը չեն կազմում։ Եւ Մարկայանը օգտակար ոյժ էր, երբ աշխատակցում էր լրագրին, նա նայն օգտակար գրողը մնաց և այժմ, երբ իր գրական լուծման տալիս է առանձին հրատարակութիւններով, Վերջիններիս մէջ գուտ ազգագրական ճիւղին են պատկանում «Հայ գեղջուկի ալբոմ»-ի երկու մասերը։ իսկ կիսա-գեղարուեստական և կիսա-ազգագրական ճիւղին են պատկանում նրա «Ներդու» վէպը, և «Հօրոտ-Մօրոտ»-ի երկու գրքերը, որոնցից առաջինը նոր է լոյս տեսել, «Ներդու»-ը մի սարսափելի դրամայի պատմութիւն է և հեղինակը իբրեւ ճարտասան պատմիչ ճիշտ որ

Պարոզանում է հետաքրքրել ընթերցողին։ Բայց դա գեղա-
 րուեստական երկ չէ և փոքր ի շատէ ճաշակ ունեցող ընթեր-
 ցողին կարող չէ բաւականութիւն տալ։ Սա այն վէպերին
 է նման, որոնք հարկւրներով ամեն տարի լոյս են տեսնում
 աշխարհիս բոլոր ժողովրդային և էժանագին լրագիրներում.
 սկսւում են նոր տարու համարից և վերջանում են դեկ-
 տեմբերի 31-ին։ Դրանցից լաւագոյնները—տաղանդաւոր հեղի-
 ղինակների երևակայութեան ծնունդն են. իսկ մեծաւ մասամբ
 —քէական դատարաններից և լրագրական քրոնիկոններից հա-
 լաքուած նիւթեր։ Վրդումի-ի սիւժէտը կարծեմ վերցրած է
 կեանքից, բայց դա չի կարողանում բարձրացնել վէպի արժէքը։
 «Հօրուս-Մօրուս» անունով լոյս տեսած պատկերները անլի հա-
 սուն գրուածքներ են, բայց նրանց մէջ էլ քիչ է գեղարուես-
 տական տարրը։ Սրանք ազգագրական նկարագրութիւններ են,
 առաջնորդող յօդուածներ, թղթակցութիւններ, պարսաւներ—
 գրուած բէլլետրիստիկայի ձևով։ Թէ առաջին և թէ երկրորդ
 գրքի վէպիկները այդ տպաւորութիւնն են թողնում ինձ վերայ։
 Հեղինակը անուանում է նրանց «պատկերներ» եւ կաւեյացնեմ
 չլուսանկար պատկերներ, որովհետև սղջա նկարչի վրձինի տա-
 կից դուրս եկած պատկերներ չեն, որտեղ տեսնուած է և զգաց-
 ւում է հեղինակի ստեղծագործութիւնը, այլ լուսանկարներ
 են, որոնք չեն ստեղծւում, այլ պատկերահանւում են զրեթէ
 մեքենաբար։ Կամիմ ասել, որ երկրորդ դէպքում գեղարուես-
 տական ստեղծագործութիւնը երկրորդ անդն է բռնում։ Վեր-
 ցրէք Մալխասեանի երկրորդ գրքի պատկերները՝ «Օջախի մա-
 բուրը», «Ամուսնական խաչը», «Կրակ է...», «Թորոս աղի մոր-
 թած ուլը», և «Ժայռերը»։ Ի՞նչ են դրանք եթէ ոչ լուսանկար-
 ներ, կամ լրագրական թղթակցութիւններ։ Սա կարգում եմ և
 զգում, որ այդ բոլորը ճիշտ եղելութիւն է, որ աղքատու-
 թիւնը գիւղում օարսափելի է, իսկ սոցիտութիւնը աննկարագ-
 րելի։ որ կինը զոհ է ամուսնու ձեռին. որ քահանայական ընտ-
 բութիւնը լոկ տնտեսական հարց է և այլն և այլն։ Սա զգում
 եմ, որ հեղինակը ամեն ինչ արձանագրում է խղճի մտօք, հա-
 լառաբիմ մնալով իրականութեանը։ Բայց հեղինակը ոչ կարո-
 ղանում է ինձ յափշտակել իր նկարագրութիւններով ու պատ-
 մութիւններով, ոչ էլ համոզել, որ դա ընդհանուր երևոյթ է։
 Ամեն մի պատկեր այսպիսով ունենում է իր անհատական նշա-
 նակութիւնը և ազդեցութիւնը։ Բացի դրանից դուր չէ գալիս

ինձ և հեղինակի պատմելու ձևը, որը գուցէ եթէ կենդանի խօսք լինէր, այլսոյժ լինէր, բայց իբրև տպագրական խօսք— ձանձրալի է. մանաւանդ երբ հեղինակը չի կարող զսպել իր ճարտասանութիւնը և երկարախօսութիւնները Դժուարամարս է և դաւառաբարբառը Զգիտեմ գուցէ նրանից է որ ես Կովկասում չեն ծնուած, կամ գուցէ նրանից, որ ես սնուած եմ երոպական և ռուսական գրականութեան վերայ, բայց ամեն անգամ, երբ ձեռս եմ տռնում Ագապեանի, Մալխասեանի կամ այլ հեղինակների գաւառաբարբառներով գրուած երկերը— զգում եմ, որ մեր գրականութիւնը դեռ երեսայական հասակումն է, այն հասակում, երբ գաւառաբարբառը դեռ քաղաքացիական իշխանութիւն ունի: Կարծում եմ, որ սխալուած չեմ լինի, եթէ ասեմ, որ այդ գրողների ժողովրդականութիւն չը վայելելու պատճառներից գլխաւորն այն է, որ նրանք գաւառաբարբառով են գրում: Մալխասեանի պատկերներն էլ անշուշտ շատ բան կորցնում են բարբառով գրուած լինելու պատճառով:

Բայց այս բոլոր բացասական կողմերի վերայ անհրաժեշտ եմ համարում աւելացնել Վօրոտ Մօրոտի և դրական կողմերը: Հեղինակը անպայման դիտելու, նշմարելու, և պատմելու տաղանդ ունի, որի շնորհիւ նա ընթերցանելի է դարձնում այնպիսի պատկերներ, այնպիսի կեանքից, որոնք իսկապէս ասած մեր սրտին շատ մօտ պէտք է լինէին, բայց դժբաղդաբար անտես են արձուցած: Հեղինակը լաւ գիտէ գիւղը և նրա ցաւերը, նա սիրում է գիւղացու չարն ու բարին և սիրով է այդ բոլորը նկարագրում: Բայց և նրանից մի վրէժ բարձր լինելով— տեսնում է գիւղի այն ցաւերը, որոնք ցեցի նման աննկատելի ուտում են, փչացնում են գիւղական կեանքը, բարոյականութիւնը և տնտեսական բարօրութիւնը: Պ. Պօպեանի, Ագապեանի և այլոց նման Յ. Մալխասեանն էլ իր ոյժի չափով ժողովրդագրող է և այն առաւելութեամբ, որ ոչ չափազանցնում է գիւղացու և գիւղի վատ կողմերը, ոչ էլ իդէալականացնում նրանց: Նա լուսանկարիչ—սիրող է գրականութեան մէջ և իբրև այդպիսին լայնացնում է մեր մտաւոր հորիզոնը տալով մեզ պատկերներ այն կեանքից, որը կրկնակի վարագոյրներով ծածկուած է մեզնից, հայ ինտելիգենտից, որ ստիպուած է քաղաքում մնալ, քաղաքում գործել:

ՄԻՆԱՍ ԲԵՐԱՆԻՆԱՆ